ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Կյանքի 85-րդ տարում վախճանվեց հայ ականավոր լեզվաբան, հայագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, Հանրապետության Նախագահի մրցանակի դափնեկիր Աշոտ Մուրադի Սուքիասյանը: Ծնվել է 1922 թ. օգոստոսի 18-ին Թիֆլիսում, Արևմտահայաստանից տեղահանված, կոտորածների սարսափը ճաշակած և ազատագրական պայքարի բովով անցած ծնողների ընտանիքում: Հայրը խլաթցի էր, Սերոբ փաշայի (Վարդանյան) հայրենակիցն ու անձամբ ճանաչողը, Անդրանիկի և հայ այլ զորավարների զորամասերում կռված, իսկ մայրը՝ մանազկերտցի մի համեստ ու ազնվական հայուհի էր: Ա. Սուքիասյանի և իր ընտանիքի ճակատագիրը բնութագրական է Կովկասում ապաստանած հայ գաղթականության համար ընդհանրապես: 1940 թ. գերազանց գնահատականներով ավարտելով Թիֆլիսի 86-րդ հայկական միջնակարգ դպրոցը՝ Ա. Սուքիասյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը՝ վայելելով իր համակուրսեցիներ Պ. Սնակի, Վ. Դավթյանի, Ս. Աղաբաբյանի, Վ. Մեսրոպյանի սերն ու բարեկամությունը: Բայց այդ հաճույքը երկար չի տևում. 1941 թ. հունիսին պայթում է Հայրենական մեծ պատերազմը, և Ա. Սուքիասյանն իր շատ հասակակիցների հետ զորակոչվում է բանակ, մասնակցում Կովկասյան ռազմաճակատում մղվող ծանր մարտերին, 1942 թ. փետրվարին ծանր վիրավորվում է, և որպես հաշմանդամ զորացրվում է բանակից: Ապաքինվելուց հետո՝ 1945-ին, ուսումը շարունակում է համալսարանում և 1948-ին ավարտում այն: 1949 թ. հունիսի 14-ին նրա ընտանիքը Թիֆլիսից շատ անմեղ մարդկանց հետ, իբրև անբարեհույս աքսորվում է Ալթայի երկրամասի խորքերը: Սակայն մի քանի ամիս անց միության կառավարության տարբեր պատասխանատու ներկայացուցիչների (Կենտկոմի առաջին քարտուղար, Մինիստրների խորհրդի նախագահ, պաշտպանության նախարար) հղած իր անկեղծ դիմում-բողոքների շնորհիվ Ա. Սուքիասյանին հաջողվում է աքսորից ետ վերադարձնել իր ընտանիքը, մի բան, որ հազվադեպ երևույթ էր խորհրդային պետության իրավաքաղաքական պրակտիկայում: 1950 թ. Ա. Սուքիասյանն ընդունվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի լեզվի



ինստիտուտի ասպիրանտուրան «Հայ բառարանագիտություն» մասնագիտությամբ՝ աշակերտելով մեծն Հր. Աճառյանին, դառնալով նրա վերջին և սիրելի ասպիրանտը: 1954-ին պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն («Խորհրդահայ բառարանագրությունը») և նույն տարին աշխատանքի անցնում լեզվի ինստիտուտում: Սկսվում է Ա. Սուքիասյանի գիտական կյանքի բեղմնավոր ժամանակաշրջանը: Այստեղ նա ձեռնամուխ է լինում հայոց լեզվի հոմանիշների բառարանի կազմման տքնաջան աշխատանքին, որն ավարտվում և տպագրվում է 1967-ին՝ դառնալով հեղինակի գիտական գլուխգործոցը: Այս կոթողային աշխատությունն ընդգրկում էր հայոց լեզվի գործառնական տարբեր ոլորտների պատկանող շուրջ 83 հազար բառ ու դարձվածային միավոր: Ա. Սուքիասյանն իր իսկ կազմած բառարանի ընձեռած փաստական հարուստ նյութի հիման վրա տեսական հետազոտության է ենթարկում արդի հայերենի հոմանիշները («Հոմանիշները ժամանակակից հայերենում» մենագրությունը), որը 1971-ին պաշտպանում է որպես դոկտորական ատենախոսություն: 1960-ական թվականների վերջերին նա աշխատանքի է անցնում Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետում՝ սկզբում դոցենտի, ապա պրոֆեսորի պաշտոններով: Իսկ 1976–1991 թթ., շուրջ 15 տարի, նա վարել է Երևանի պետհամալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնը, ինչը բանասիրական ֆակուլտետի և հայոց լեզվի մասնագետների հիշողության մեջ մնում է իբրև ամբիոնի աշխատանքների վերելքի, գիտահետազոտական ուսումնասիրությունների ծաղկման, ուժերի համախմբման մի բացառիկ ժամանակաշրջան՝ շնորհիվ Ա. Սուքիասյանի ներդրած նվիրական ջանքերի:

Մեծ է Ա. Սուքիասյանի ներդրումը հայ նորագույն շրջանի բառարանագրության, բառագիտության և բառարանագիտության ասպարեզներում: Հոմանիշների բառարանից բացի նա գործուն մասնակցություն է ունեցել «Ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական բացատրական բառարանի» սկզբունքների մշակման և կազմման աշխատանքներին, պրոֆ. Ս. Գալստյանի հեղինակցությամբ կազմել և հրատարակել է (1975 թ.) շուրջ 25 հազար դարձված ընդգրկող «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը»: Նույն Ս. Գալստյանի հեղինակցությամբ նա կազմել և հրատարակության էր հանձնել «Արդի հայերենի քառահատոր բացատրական բառարանը», և ապա միանձնյա կազմել ու տպագրության էր պատրաստել «Օտարազգի բառերի բառարանը», որոնք, ցավոք, մնացին անտիպ: Դստեր՝ դոցենտ Քնարիկ Սուքիասյանի մասնակցությամբ նա 2002 թ. հրատարակում է «Արդի հայերենի ուղղագրական ձևակազմական բառարանը», իսկ Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանի երկրորդ լրամշակված հրատարակությունը (2003 թ.) արժանացավ ՀՀ Նախագահի մրցանակին:

Երկար տարիներ դասավանդելով Երևանի պետհամալսարանում՝ Ա. Սուքիասյանն իր գիտամանկավարժական փորձն ու հմտություններն ամփոփեց «Ժամանակակից հայոց լեզու» ուսումնական ձեռնարկում (1982 թ.), որն իր նյութի ընդգրկունությամբ, մատչելիությամբ ու գիտական խորությամբ դարձավ ուսանողության սիրված ձեռնարկներից մեկը և հետագայում ունեցավ մի քանի վերահրատարակություն:

Աշոտ Սուքիասյանի կերպարը, սակայն, շատ բանով թերի կմնար, եթե նրա գիտական վաստակի հետ նկատի չառնվեին նրա մարդկային մի շարք արժանիքները. ամենից առաջ՝ նրա սրամիտ խոսքն ու հումորի առինքնող զգացողությունը, ապա քննական - վերլուծական միտքն ու երևույթների խորքերում բուն ճշմարտությունը տեսնելու, կռահելու բացառիկ ունակությունը, ազնիվ ու անկաշառ բնավորությունը, անկոտրում կամքը, անզիջում սկզբունքայնությունը՝ միաձուլված նրա բարության, ջերմ մարդասիրության, արդարամտության և անկեղծ հայրենասիրության հետ, նրան դարձնում էին մի կողմից հեղինակություն իր միջավայրում, մյուս կողմից՝ հզոր ու աննկուն բնավորություն, որ ցայտուն դրսևորվեց նրա ողջ կյանքի ընթացքում և, մանավանդ, վերջին տասնամյակներում, հատկապես իր մերձավոր հարազատների անդառնալի կորստյան ժամանակ:

Աշոտ Սուքիասյան գիտնականի, մարդու, քաղաքացու պայծառ ու անթերի կերպարը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ